

ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

Մատերիայի տարածականությունը՝ տարածությունը, որը հնարավոր է դարձնում նյութական գոյությունը, կարևորագույն նախապայման է ոչ միայն մեխանիկական շարժման, այլև զարգացման համար: Այն օբյեկտիվ իրականություն է, այնինչ մարդկային պատկերացումը նրա մասին՝ ծայրահեղորեն սուբյեկտիվ: Մարդու տարածական ընկալումը, եռաչափ տարածության մեջ իր տեղի գիտակցումը և տարածական հարաբերությունների արտացոլումը լեզվում հետաքրքիր են լեզվաբանական տեսանկյունից և կարևորվում են թե՛ լեզվական ընդհանրությունների դիրքերից, թե՛ լեզվում գործող համակարգային հարաբերությունների տեսանկյունից:

Որպեսզի ուսումնասիրությունը ավելի պարզորոշ ներկայացնի տարածական հարաբերություններ արտահայտող բառերի միջև գոյություն ունեցող իմաստային համակարգայնությունը, ավելի նպատակահարմար ենք գտնում իմաստային դաշտերի մեթոդի կիրառումը: Ըստ լեզվաբանական գրականության մեջ հաստատված սահմանման, իմաստային դաշտը ներառնում է միևնույն իմաստային բաղադրիչի շուրջ խմբավորող բառային միավորները՝ անկախ իրենց խոսքիմասային պատկանելիությունից: Հարկ է նշել, որ տարածական հարաբերությունների մեր քննությունը սահմանափակվել է ածական խոսքի մասով, քանզի որոշ ուսումնասիրություններ արդեն կատարվել են գոյականների, բայերի և նախդրավոր կառույցների նյութի հիման վրա, սակայն ածականները քննության առարկա դեռևս չեն դարձել:

Սույն ուսումնասիրության լեզվական նյութը անգլերենի տարածական հարաբերություններ արտահայտող ածականներն են: Քննության մեջ փորձ է արվում ընդգծել ներհամակարգային ուժերն ու հակադրությունները անգլերենի տարածության իմաստային դաշտում և միևնույն ժամանակ առանձնացնել դրա կառուցվածքային հատվածները:

Լեզվական նյութը քաղվել է "Webster's New World Dictionary"-ից և կազմում է 650 միավոր: Ընտրվել են միայն այն ածականները, որոնց բառարանային մեկնաբանության մեջ կա տարածությունը բնորոշող հատկանիշներից

(մատերիական միջավայր, մարմնի ծավալային հատկություններ՝ օրինակ եռաչափություն, փռվածություն, կապակցվածություն, անընդհատություն) առնվազն մեկն արտացոլող իմույթ: Ռեսուրսայինության ժամանակ կիրառվել են բառարանային մեկնաբանության վերլուծության, իմաստաբանական փոխկադապարման, բաղադրական վերլուծության մեթոդները և վիճակագրական վերլուծության որոշ տարրեր:

Ելակետային համարելով Ի.Տրիտի սահմանումը՝ իմաստային դաշտը մենք դիտում ենք որպես լեզվաբանական դաշտի մի տեսակ, մի ամբողջական միավոր, որն ունի կոնկրետ բովանդակություն և որի էական հատկանիշը նրանում գործող ուժերի աստիճանակարգությունն է: Ռեժերի աստիճանակարգությունը, ներկայանալով որպես իմաստային հարաբերությունների տարասեռություն, գոյություն ունի դաշտի տարրերի, ինչպես նաև նրա կառուցվածքային հատվածների՝ միջուկի և ծայրերի միջև:

Տարածության իմաստային դաշտի միջուկը կազմել են առաջնային տարածական նշանակություն և խոսողների համար հոգեբանական կարևորություն ունեցող բառային միավորները, որոնք իմաստային առումով բաղադրյալ չեն և ունեն կիրառության բարձր հաճախականություն: Ինչ վերաբերում է ծայրամասային միավորներին, ապա մասնավորեցնող իմույթների թվային աճին և իմաստույթների ստորակարգությամբ զուգահեռ տեղի է ունենում միավորների հեռացում միջուկից: Տարածության իմաստային դաշտի կառուցվածքային տարրեր հատվածները կազմող բառային միավորների վիճակագրական տվյալները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. միջուկ՝ 87.2%, ծայրամասային միավորներ՝ 12.8%:

Ղաշտում գործող հարաբերությունները կառուցվում են հակադրությունների հիման վրա, քանի որ ոչ մի միավոր ինքնին չի կարող ունենալ լեզվաբանական արժեք՝ և ձեռք է բերում այն միայն այլ միավորների հետ հակադրվելիս: Բառային հակադրություններ ասելով՝ հասկանում ենք բառապաշարային երկու միավոր, որոնք միևնույն ժամանակ ունեն և՛ ընդհանուր, և՛ տարբերակիչ բաղադրիչներ: Տարածության իմաստային դաշտի բոլոր բառային միավորների (այդ թվում և հակադրությունների) ընդհանուր, կարգային բաղադրիչը «տարածականությունն» է, իսկ տարբերակիչները կարող են լինել «շարժում—անշարժություն», «տեղակայություն—փռվածություն», «համատա-

րածականություն—դչ-համատարածականություն»,
ծգվածություն» և այլն:

«տարածվածություն—

Տարածության իմաստային դաշտում մեր վեր հանած հակադրու-
թյուններից առաջինը կարելի է համարել «շարժունություն—անշարժություն»
իմույթների հակադրումը: Մ.Վ. Վսեվոլոդովային հետևելով՝ շարժունություն
ասելով մենք հասկանում ենք հատկանշի՝ լոկումի նկատմամբ համադրության
փոփոխությունը: Անշարժություն ասելով՝ հասկանում ենք լոկումի և հատկանշի
համադրությունը, որի դեպքում շարժումը չենք բացառում, եթե հատկանիշը
դուրս չի գալիս լոկումի սահմաններից: Չմտ.

Շարժունություն

Անշարժություն

Skyward—toward the sky

Limitrophe—on the border

Effluent—flowing out or forth

Water-borne—floating on or carried
by the water

Ձարմանալի չէ, որ ածական խոսքի մասում գերակշռում են անշարժու-
թյան իմույթով միավորները, մոտավորապես 486 բառ ի հակադրություն
փոքրաթիվ 70 բառային միավորների, որոնց իմաստային համակարգում առկա
է միայն շարժունության իմույթը: Չարկ է մշել, որ 90 տարածական ածական
իրենց իմաստային համակարգում համատեղում են անշարժության և շարժու-
նության իմույթները, այսպիսով, ականատեսն ենք դառնում խաչամիտման:
Չմտ.

Inward—1. situated within; being on the inside; internal

2. directed toward the inside; ingoing

Uphill—1. going or sloping up; rising

2. located on high ground

Պարզ է, որ այսպիսի բառերի մեծամասնությունը բազմիմաստ են և
իմաստության յուրաքանչյուրը ներկայացնում է տարբեր իմույթներ: Սակայն
քիչ չեն նաև մենիմաստ ածականները, որոնց որպես տարբերակ ներառում են
և՛ շարժունության, և՛ անշարժության իմույթները, օրինակ՝

Lateral—of, at, from or toward the side; sideways

Cephalic—in, on, near or toward the head

Շարժման իմույթը տեսականորեն կարելի է տրոհել «շարժման ուղղու-
թյուն» և «շարժման կետ» բաղադրիչների, սակայն հարկ է մշել, որ անգլերենի
իմաստային դաշտում չկան այս հակադրությունը հստակորեն արտահայտող
տարբերակիչ հատկանիշներ, ինչը և թույլ է տալիս անգլերենի տարածության

իմաստային դաշտի դեպքում խոսել միայն «շարժման ուղղություն» բաղադրիչի առկայության մասին: «Շարժման ուղղություն» իմուլթի առավել ստորակարգային մակարդակ կարելի է համարել «հեռացում»—«մոտեցում» տարրերի հակադրությունը:

Heavenward—toward heaven (մոտեցում)

Earthward—toward the earth

Չմմտ.

Tail—from the rear (հեռացում)

Lateral—from the side

Հատկանշական է, որ այս խմբավորման մեջ «հեռացում»—«մոտեցում» հակադրությունը կարող է համաժամանակորեն ներառվել բառի իմաստային համակարգ՝ առանց տարբեր իմաստություններում իրար հակադրվելու, ինչն էլ վկայում է իմաստների բնեռացման (հակիմաստություն, ներհակամիջություն) մասին: Օրինակ՝

Eastwardly —1. toward the east

2. from the east

South-southeast — 1. in or toward this direction

2. from this direction

Ինչ վերաբերում է «շարժման կետ» իմուլթին, ապա այն մեր կողմից ուսումնասիրվող նյութում հավանաբար կարող է հանդես գալ որպես «սկզբնակետ»—«վերջնակետ» հակադրության առավել բարձր աստիճանակարգային միավոր: Սակայն հարկ է նշել, որ այս դեպքում էլ շարժման ուղղությունն արտահայտող իմուլթը կամ լրացնում է «շարժման կետ» բաղադրիչը, կամ էլ այս 2-ը խաչամիտվում են, օրինակ՝

Basipetal—*developing or moving from the apex toward the base of the stem*

Centrifugal—1) moving or tending to move away from the center

2) Bot. Developing *from the center outward*

Տարբեր իմաստություններում թե՛ շարժունության, թե՛ անշարժության իմուլթները համատեղող բառերում, կարելի է հաստատապես մատնանշել «սկզբնակետ» հասկացության առկայությունը, օրինակ՝

Transoceanic—1) crossing or spanning the ocean

2) *coming from* or being on the other side of the ocean

Earthborn—born on or *springing from* the earth

«Շարժում» խորագրին հակադրելով «անշարժությունը»՝ վերջինս տրոհել ենք «տեղակայություն»—«փոփոխություն» տարրերին: «Տեղակայու-

թյուն» ասելով՝ հասկանում ենք տեղակայվող հատկանիշի և լոկուսի ստատիկ՝ անշարժ հարաբերությունը, իսկ «փռվածությունը» կոչված է միավորելու այն բառերը, որոնք միևնույն ժամանակ զբաղեցնում են որոշակի մակերես: Հմմտ.

Տեղակայություն
Downstairs—situated on a lower floor
Colonial—of or living in a colony
Canned—put up in a can
Shoe-string—at, near or around the ankles

Փռվածություն
Far-flung—*extending* over a wide area
Citywide—*extending* throughout a city
Statewide—*extending* throughout a state
Circumambient—*extending* all around

«Փռվածություն» իմույթը կարելի է այնուհետ տրոհել «տարածվածություն» և «ծղվածություն» միավորներին: «Տարածվածություն» ասելով՝ հասկանում ենք լայնական ծավալում և որոշակի տարածքի (մակերեսի, մակերևույթի) ընդգրկում և ծածկում, այնինչ «ծղվածությունը» միայն կարելի է համարել երկայնակի տեղակայություն առանց դեպի աջ և ձախ կողմերի ծավալման: Համեմատե՛ք հետևյալ օրինակները «փռվածություն» իմույթը ներկայացնող վերը նշված միավորների հետ.

Meridian—of or *along* the meridian
Decurrent—*extending down along* the stem

Անշարժության երրորդ աստիճանակարգային մակարդակը մեր պատկերացմամբ «համատարածականություն»—«ոչ-համատարածականություն» հակադրությունն է: Համատարածականությունը բնութագրելիս՝ մենք ելնում ենք այն դրույթից, որ հատկանիշը գտնվում է լոկուսի սահմաններում: Մինչդեռ եթե հատկանիշը լոկուսի սահմաններից դուրս է, ապա խոսքը միանշանակորեն «ոչ-համատարածականության» մասին է:¹ Հմմտ.

Համատարածականություն
Centered—being at the center
Gular—of or on the throat
Woodland—of, living in, or relating to the woods
Mural—of, on in or for a wall

Ոչ-համատարածականություն
Ultramarine—beyond the sea
Extragalactic—outside or beyond our own galaxy
Transmontane—situated beyond the mountains
Supracostal—situated above or outside the ribs

պատկյառ սույ առկա ռասստարյառապատ

¹ Sb'u նաև Всеволодова М. В., Владимирский Е. Ю. Способы выражения пространственных отношений в современном русском языке, Москва, 1982.

տումը, հատկապես որ մեր լեզվական նյութում հաջողվել է առանձնացնել հպման տարբերակիչ հատկանիշով իմուքների մի ամբողջ շարք.

Riparian—of, *adjacent to*, or living on the bank of a river, or sometimes of a lake, pond, etc.

Contiguous—1) *in physical contact; touching along all or most of one side*

2) *near, next or adjacent*

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ անգլերենի տարածական ածականները կա՛մ չեզոք, կա՛մ տերմինաբանական բնույթի են: 650 բառային միավորներից 87.2% կազմում են կենտրոնը, իսկ 12.8%՝ ծայրերը: Տարածության իմաստային դաշտում նկատվել են հետևյալ 6 իմաստային հակադրությունները.

1. Շարժում /ուղղություն/—անշարժություն

2. Հեռացում—մոտեցում

3. Տեղակայություն—փոփոխություն

4. Համատարածականություն—ոչ-համատարածականություն

5. Հպում—ոչ-հպում

6. Տարածվածություն—ծզվածություն:

Բացի այս հակադրություններից, նկատվել են նաև խաչամիտման և իմաստային բևեռացման բազմաթիվ դեպքեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Васильев А.М. Типы семантических полей по их структуре и по способам репрезентации: В кн. Слово в системе и тексте, Новосибирск 1988.

Всеволодова М. В. , Владимирский Е. Ю. Способы выражения пространственных отношений в современном русском языке, Москва , 1982.

Гольдберг В.Б. Контрастивный анализ лексико-семантических групп, Тамбов, 1988.

Супрун А.Е. Лексическая система и методы её изучения: В кн.: Методы изучения лексики, Минск, 1975.

Уфимцева А.А. Опыт изучения лексики как системы, Москва, 1962.

Шадурский И.В. Тематическое изучение лексики: В кн.: Методы изучения лексики, Минск, 1975.